Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում

ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիր

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիվ 15

2025թ. հուլիս

Վերապատրաստումից վերափոխում. առաջընթացի մեկ ամիսը

2025թ. հուլիսին ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակում աջակցեց Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, օրենսդրական բարեփոխումների խթանմանը և լաբորատոր ենթակառուցվածքի կարողությունների բարձրացմանը:

Ամսվա կարևոր իրադարձությունները.

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի ներկայացմանը Ազգային ժողով:
- Ժամանակի և հաճախականության չափագիտության թեմայով հնգօրյա մասնագիտացված դասընթաց ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի չորս աշխատակցի համար:
- Օրենսդրական չափագիտության թեմայով մասնագիտացած առցանց դասընթացների շարք՝ ուղղված Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (ՇՎՏՄ) 28 աշխատակիցների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Կառավարությունը հավանություն է տվել չափագիտության մասին օրենքի նախագծի ներկայացմանն Ազ

ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «**«Չափումների միասնականության ապահովման մասին»** օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ սահմանված կարգով ներկայացմանն Ազգային ժողով: Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է OIML չափանիշներին համահունչ սահմանումների, չափիչ գործիքների և նախապես փաթեթավորված ապրանքների համար չափագիտական ու շուկայահանման պահանջների ներդրում, ինչպես նաև Ազգային չափագիտության խորհրդի ստեղծում՝ փորձագիտական ուղղորդում տրամադրելու համար: Օրենքի նախագծի **հանրային լսումների փուլը բաց է 2025 թվականի հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 18-ը**, և միաժամանակ այն կներկայացվի Ազգային ժողով՝ քննարկման նպատակով:

Տրամաչափարկման ընթացակարգեր թեմայով դասընթաց (հուլիսի 21-25)

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի չորս աշխատակից մասնակցեց ինգօրյա մասնագիտացված դասընթացի, որի նպատակն էր զարգացնել մասնակիցների տեխնիկական կարողությունները ժամանակի և հաճախականության տրամաչափարկման ոլորտում, ինչպես նաև աջակցել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի լաբորատորիայի կողմից ISO/IEC 17025:2017 ստանդարտի ներդրմանը՝ ազգային հավատարմագրմանը նախապատրաստվելուն ընդառաջ:

Մասնակիցները կատարել են ժամանակի և հաճախականության չափումներ, գնահատել չափման անորոշությունը, նախագծել տրամաչափարկման վկայականներ և մշակել համապատասխան ընթացակարգեր: Դասընթացը միտված էր տրամաչափարկման ընթացակարգերի վերջնականացմանը, ամբողջական տրամաչափարկման գործընթացի իրականացմանը, ինչպես նաև ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի ժամանակի և հաճախականության լաբորատորիայի աշխատակիցների նախապատրաստմանը հավատարմագրմանը:

Օրենսդրական չափագիտության թեմայով մասնագիտացած առցանց դասընթացների շարք (հուլիսի 24, 30 և 31)

Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (ՇՎՏՄ) 28 աշխատակից մասնակցել է մասնագիտացած առցանց երեք դասընթացի, որոնք վերաբերում էին ԵՄ օրենսդրական չափագիտության հրահանքներին՝ Նախապես փաթեթավորված ապրանքների (PPP), Ոչ ավտոմատ կշռող սարքերի (NAWI) և Չափող սարքերի (MID) վերաբերյալ հրահանգ:

Չեխիայի չափագիտության ինստիտուտի (CMI) փորձագետները ներկայացրել են ԵՄ իրավական կարգավորումները, չափագիտական և տեխնիկական հիմնական պահանջները սահմանող EN 45501:2015 համապատասխանեցված ստանդարտները և միջազգային OIML R76 առաջարկությունները, ինչպես նաև դրանց իրականացման և անդրսահմանային համապատասխանեցման մարտահրավերները:

Բոլոր երեք դասընթացները բաղկացած էին տեսական և գործնական բաղադրիչներից՝ մասնակիցներին հնարավորություն ընձեռնելով ծանոթանալ օրենսդրական չափագիտության համապատասխանության, վերահսկողության և ԵՄ չափանիշների հետ ներդաշնակեցման արդյունավետ գործիքակազմին և լավագույն փորձին: Ի շարունակություն առցանց դասընթացների՝ առաջիկայում Երևանում անցկացվելու են առավել խորացված և գործնական դասընթացներ առդեմ ձևաչափով:

«Դասընթացի գործնական մասը հատկապես արժեքավոր էր: Մեր կատարած սխալներին անդրադառնալը և դրանցից սովորելն այնքան էլ հեշտ չէր, սակայն չափազանց օգտակար էր: Կարծում եմ՝ դասընթացն ավելի արդյունավետ կլինի, եթե ներառվեն հավելյալ թեստեր և գործնական վարժություններ»:

Մասնակից, ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ

Ծրագրի մասին

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային եւ տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան եւ առեւտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

Ծանոթագրություն

Ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Այս տեղեկագրի բովանդակության պատասխանատուն բացառապես հեղինակներն են եւ այն կարող է չարտահայտել Եվրոպական միության եւ ՄԱԱԶԿ-ի տեսակետները: Այս տեղեկագիրը հրապարակվել է «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Տեղեկագիրը պատրաստվել է առանց Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական խմբագրման:

Ծրագրի արդյունքները (2025թ. հուլիս)

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի և ՇՎՏՄ 32 աշխատակցի վերապատրաստում կարողությունների զարգացման երեք դասընթացի արդյունքում

65,864 դիտում դիտում և 3,529 ներգրավվածություն սոցիալական մեդիայի հարթակներում հրապարակումների արդյունքում

753 հետևորդ ծրագրի սոցիալական մեդիայի հարթակներում

Լրացուցիչ տեղեկության համար դիմել՝
Ծրագրի ղեկավար Ցոնգ Վուին, C.WU@unido.org

Նորությունների համար հետևեք մեզ՝

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից